ՓԱՐԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԻԶՄԻՐ ՀՈՐԵՔՇԱԲԹԻ Ե ԴԵԿՏԵՄԲԵՐ 1884 — ԹԻՒ 13[illegible]

# ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀԱՏՐ 4 ՄԷԿԱԼԻՔ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՀՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱՏՐ 4 ՄԷԿԱԼԻՔ

Ց. Գ. ՍԱՂԱՖԵԱՆ
Համարատու—Տնօրէն

ՏԱՐԵԳԻՆ ԿԱՆԽԻԿ

| | | |
|---|---|---|
| ԻԶՄԻՐ . . . . | Օսմ. ոսկի | 1 |
| ԴՈՒՐՍԸ. . . . | Մէճիտիէ | 6 |
| ՕՏԱՐ ԵՐԿԻՐ . | Ֆրանք | 25 |

ԾԱՆՈՒՑԱԳԻՆ

| | | |
|---|---|---|
| 3 | դրուշ տողը | ՄԷԿ ԱՆԳԱՄ |
| 2 | դրուշ . . . . | ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ |
| 60 | փարա . . . | ԵՐԵՔ ԱՆԳԱՄ |

Գ. Գ. ՊԱԼԹԱԶԱՐԵԱՆ
Հիմնադիր

Ա. Կ. ԱՂԱԶԱՐԵԱՆ, կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վերաբերեալ բոլոր գործերը։ Շիշէ՝ Ֆիլէր ճատտէսի Զինկըրլաբա Ֆէրիանէ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի։ Սէվրի խան թիւ 17

ԻԶՄԻՐ ՀՈԿԵՔ. 5/17 ԴԵԿՏԵՄ. 1884

## ԱԶԳ

Լրագրոյս Խմբագրոյն անձնական տկարութեան պատճառաւ՝ թերթիս հրատարակութիւնը յապաղելուն համար ապնիւ ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրուի։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

(Պրինսիպսի Թղթաբեր)

ԱԼՄԱՆԻԱ

Պէրլինէն «Կազէթ տը Ֆրանքֆորթի» կ'իմացնեն թէ՝ ընկերվարական ռամկապետականներու խումբը կազմուեր և դիւանն ալ ընտրուեր է, ուստի պիտի առաջարկուի երեսփոխանաց թիւն աւելցնել՝ բնակչաց ներկայ թըւոյն համեմատ։

Համպուրգի մէջ 300,000 մարքի դրամագլխով ընկերութիւն մը կազմուեր է՝ Նիժէրի և Պէնէդիքչիկաները հետաքննութիւններ կատարել տալու համար։

ԱՒՍՏՐՕ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Երեսփոխանական ժողովը կը գումարի դեկտ. 4ին։ Իւր վերջին նստաշրջանն ըլլալով՝ կ'ըսէ «Թան», և ուստի երեսփոխանաց մեծագոյն մասը ապագայ ընտրութիւններու զրաղած ըլլալով՝ բնականաբար պիտի զգուշանայ այն ամէն խնդիրներէն, որոնք կրնան իր ընտրողներուն դժգոհութիւն պատճառել։ Եթէ ուրիշ երկիրներու մէջ ընտրութիւնք կանխաւ մեծ շարժում և յուզում կը պատճառեն՝ Աւստրիոյ մէջ այսպէս չէ, ըստ որում գլխաւոր ընտրողն նոյն իսկ պաշտօնէութիւնն է, ուստի այս միջոցին նորա որևիցէ առաջարկ առանց ընդդիմութեան պիտի ընդունուի։

Թէև իրաւ է որ ձախակողմը, այսինքն գերմանական կուսակցութիւնը բոլորովին տարբեր դիրք մը պիտի ունենայ, ըստ որում որքան ալ իւր ապագայ ընտրելիութեան վրայ չըկրնար վստահիլ՝ դարձեալ ամէն ճիգ պիտի թափէ իւր դիրքը չկորնչելու համար։ Ուստի հարցապնդումներ պիտի տեղան, որոնք եթէ իրական արդիւնք մը յառաջ չբերեն՝ իրենց ժողովրդականութեան ապացոյց մը պիտի տան երկրին դէմ։

Այսու հանդերձ տարակոյս չիկայ որ 1885ի ընտրութիւնք պաշտօնէութեան նպաստաւոր պիտի լինին նորէն։

Հունգարական Խորհրդարանը ստուարամեծամասնութեամբ քուէարկեր է վճռաբանութեան ենթարկել՝ 1885ի ելևմտացոյցը։

Սակաւաթիւ մաս մը կառավարութեան համամիտ գտնուեր է։

ԱՆԳԼԻԱ

Լորտերու ժողովը՝ երրորդ ընթերցմամբ կ'ընդունի ընտրական օրինաց Ծրագիրը, զոր և թագուհին կը վաւերացնէ։ Այս լուրը կը ծանուցուի Խորհրդարանին դեկտ. 7ի նիստին մէջ, որ ներկայ նստաշրջանի վերջին նիստը կը լինի, ըստ որում Ծննդեան տօներու առթիւ կ'ըսկսի արձակուրդը որ պիտի տեւէ մինչ փետրվար 19։

Լոնտոնէն կ'իմացնեն թէ կառավարութեան գլխաւոր զբաղումն եղած է այժմ այն տարբեր տարբեր խնդիրները, զոր կը յուզէ Պէրլինի դեսպանաժողովը և թէ չըկարծուիր երբէք զի անգլիական առաջարկներուն որոշ պատասխան մը տրուի մինչև Տէրութեանց կողմանէ, և կարեւոր բանակցութիւններ սկսին՝ մինչև որ դեսպանաժողովը վախճան մ'առնելով՝ եւրոպական դեսպանագիտութեան դործելու ամէն ազատութիւն չտայ։

ՖՐԱՆՍԱ

Մերակոյսը իւր նիստերը կը շարունակէ՝ ընտրական օրինաց բարեփոխութեան վրայ վիճաբանելով թէև ամփոփումը կը պատրաստուի 1875ի օրէնքը, որ կը արամագրէ զի ոչ մեկուս պաշտօնվարէ մերակոյսի ժողովոյ անդամ մը։ Սակայն պաշտօնէութիւնը կը յայտարարէ թէ այդ բարեփոխութիւնը ուրիշ նպատակ չունի, բայց միայն մերակոյսի ժողովոյն մէջ դոյացնել մեծամասնութիւն մը որ երեսփոխանական ժողովոյ մէջ տիրող դաղափարաց համաձայն գտնուի միշտ։

Ինչ որ ալ ըլլայ այս ընտրական օրէնքը վիճաբանութեան կ'ենթարկի յօդուած առ յօդուած և հետզհետէ կընդունուի։

ԶՈՒԻՑԵՐԻ

Դաշնակցային ժողովը ի նիստ կը գումարի նոր խորհուրդը կազմելու 1884—1887 եռամեայ շրջանին համար։ Եւ միանդամայն ըստ սովորութեան անմիջապէս նախագահի ընտրութեան կը ձեռնարկէ 1885 տարւոյն համար։

ԻՏԱԼԻԱ

Երեսփոխանական ժողովը երկաթուղեաց խնդրով կը զբաղի, որու մասին ինչ ինչ առաջարկներ կը ներկայանան։ Ոմանք կը պահանջեն որ երկաթուղիները կառավարութիւնը չունել տայ։ իսկ ոմանք կը պնդեն որ հանրային շինութեան այդ ճիւղը մասնաւոր ընկերութիւններու յանձնուի յատուկ արտօնութիւններով։

Ամսոյս 6ին Վենետիկէն կը մեկնի դէպի կարմիր ծով երթալիք մարտանաւ մը, Կուալթէրի նաւապետին հրամանատարութեան ներքև, որ մասնաւոր հրաման ընդունած է՝ իրեն տրուած հրահանգները պարունակող ծրարը ճամբայն բանալ։ Այս մարտանաւը բազմաթիւ դրօշակներ կը տանի, և կը կարծուի որ Զուլա պիտի երթայ, Անգլիոյ հետ դոյացած համաձայնութեան մը համեմատ՝ թէ այդ վայրը և թէ Սոմալիի ծովեզերը դրաւելու համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Կառավարութիւնը երկու միլիոն ռուբլի այսինքն հինգ միլիոն ֆրանքէն աւելի կ'որոշէ յատկացնել Պաթումի մէջ նոր ամրութիւններու շինութեան և այս քաղաքին Նաւահանգիստը բարելաւելու համար։

ՍՊԱՆԻԱ

Ուսուցիչներու և ուսանողներու նկատմամբ ոստիկանութեան ընթացքը քննելու համար թէև կրթական խորհուրդը ի նիստ կ'ուզէ գումարիլ, սակայն արքայական հրամանաւ կ'արգիլուի։

Այս բարձրագոյն հրամանը մեծ յուզում կը պատճառէ թէ ուսանողաց և թէ ուսուցչաց մէջ, որոնք բուռն կերպով կը բողոքեն և մինչև իսկ ցոյցեր կ'ընեն, ուստի մի քանի ձերբակալութիւններ պակաս չեն լինիր։

Մադրիտէն կը ծանուցուի թէ, Գուադալի ջրերուն մէջ՝ ոսպնիական իշխանութիւնք ապստամբներու մի նաւը գրաւեր են, որու մէջ կը գտնուի եղեր Պոնտէքա հանրածանօթ ապստամբապետը, երկու պաշտօնեաներու և յիսուն մարդի հետ։

«Էբրոքա» լրագիրը կ'իմացնէ թէ Մարիանեան կղզիներու ոսպանական կառավարիչը բնիկէ մը ոսպանուած ըլլալով՝ Փիլիպպէան կղզեաց կառավարիչը զօրախումբ և մարտանաւ կը դրկէ անդ։

Մադրիտի աղատական թերթերը հանրային ուշադրութիւն կը հրաւիրեն, սա իրողութեան վրայ թէ Մարոքցի անձ մը Թանժէրէն ճիպրալթար կը բերէ ինը կին, երկու մարդ, երեք մանկամարդ աղջիկ և մէկ տղայ, ու նոյն տեղէն անգլիական շոգենաւով մը Ալէքսանտրիա և ապա ճիտտէ կը տանի զանոնք՝ հոն վաճառելու համար։

ԱՖՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎ

Մասնախումբը լիովին կը համաձայնի Գոնկոյի խնդրոյն նը կատմամբ։

Անգլիա կը ծանուցանէ թէ Նիժէրի մասին կը հաւանի այն ամէն տնօրինութիւններու, որոնք ընդունուած են Գոնկոյի համար. միայն թէ կը մերժէ միջազգային ռոնդրու մը։ Սակայն այս իրաւ է որ ռոնդրոյի սկզբունքը բոլորովին անընդունելի չ'նկատեր, վասնզի այս մասին արդէն բանակցութիւններ իսկ տեղի ունեցեր են իր և Ֆրանսայի մէջ. բայց այն ծրագիրը՝ զոր մասնախմբին մէջ գտնուած անգլիական ներկայացուցիչը կարդացեր է, այնպիսի գերիշխանութիւն մը կը վերադրէ անոր, զոր Ֆրանսայի ներկայացուցիչը անընդունելի կը յայտարարէ։ Իսկ մասնախմբին միւս անդամները կը պատասխանեն թէ չ'են կրնար կարծիք յայտնել այնպիսի կէտերու վրայ՝ զոր չ'են ուսումնասիրած։

Մասնախումբը կրկին կը լսէ Գ. Սանֆորի բացատրութիւնը Գոնկոյի երկաթուղւոյ մը ծրագրի նկատմամբ։ Անգլիա Պէլճիքա և Գերմանիա խնդիրը նկատողութեան առնելու, իսկ Ֆրանսա և Բորթուկալ հակառակ քուէ կուտան։ Խնդիրը Ցանձնաժողովին պիտի ներկայի։

Էտիմպուրկի մէջ Գ. Սթանլի Աշխարհագրական ընկերութեան հայկերոյթին առթիւ ատենաբանութիւն մը կընէ, ուր դիտել կուտայ թէ՝ ինչ յարատեւութեամբ Գերմանիա իր ուշադրութիւնը Ափրիկէի վրայ դարձուցած է։ Նա կը կարծէ թէ Անգլիա այն ատեն միայն գոհ պիտի լինի՝ երբ Ափրիկէ ազատ ըլլայ, և կը յուսայ թէ այս փաստ իրականութիւն պիտի դանէ շնորհիւ Ափրիկեան դեսպանաժողովոյ։

ՉԻՆ ԵՒ ՀՆԴԿԱ—ՉԻՆ

«Թայմզ» լրագիրը Սիպերիոյ ճամբով հեռագիր մ'ընդունած է Բէրլինէն, որ վերջերս Ֆրանսայի և չինական կառավարութեան մէջ տեղի ունեցած բանակցութիւններուն վրայ կ'խօսի։

Ֆրանսայի ներկայ խնդիրները չափաւոր և արդար կընկատուին բաղդատմամբ իրենց այժմեան զինուորական դիրքին։

Վերջին շաբաթներս պաշտօնապէս փորձ մը եղաւ խնդիրը հաշտարար կերպով կարգադրելու, սակայն արդիւնք մը չունեցաւ, ըստորում Չինացիք անկարողացան իրաց ճշդրիտ կացութիւնը ըմբռնելու։ Ահա այս պատճառաւ է զի որևիցէ ուշում մը տալ կարհամարհեցաւ ֆրանսացւոց մի քանի պատգամաւորներուն յենլով՝ ինչպէս օրինակի համար, անոնց մի անյաջողութիւնը ի Ֆորմոզայ և Ծիւլ Ֆէրրիի պաշտօնէութեան հաւանական շփոթութիւնները, չեն տեսներ այն վտանգը որ կը սպառնայ իրենց վերջնական կերպով Ֆորմոզան կորնչցնել և ստիպել Ֆրանսան բուռն պատերազմ մը ընել։

Այլ սակայն խաղաղութեան ամէն յոյս փարատած չէ, եթէ Ֆրանսա բանակցութիւնները մէկ կէտի վրայ կեդրոնացնէ։ Ստոյգ որ եթէ՝ Պ. Բարթեղեմը յուլիսի մէջ փլխանակ կիսազօր գործակալներու հետ բանակցելու ի Շանկայի, Բէքին երթար՝ դիւրաւ կարգադրութեան մը ձեռնհաս պիտի լինէր։

Հեռագրոյն գործածութիւնը հիմնական փոփոխութիւններ յառաջ բերաւ Չինաստանի գործոյ պաշտօնական ուղղութեան մէջ։ Այս արտաքին գործոյ պաշտօնէութիւնը դուրսի հետ ուղղակի յարաբերութեան մտաւ և ստիպուած գտնուեցաւ ամէն օր անմիջական պատասխաններ տալ դաւառական կառավարիչներու և օտար երկիրներու դեսպաններուն։ Իշխանութեան այս հակումը դէպի կեդրոնացումը բարի նշան մ'է դիւանական, երևմտական և այլն բարեփոխութիւններու համար։

Կայսրուհին և Ֆանկ իշխանը ամէն ճիգ կը թափեն վարչական մեքենային գործողութիւնը աւելի ազդու ընելու համար, և Ցոնկ—Լի—Եամէնի վիճակը բարելաւուած է։ Այսօր ճանչցուած է թէ վերջին սեպտեմբեր ամսոյն մէջ՝ մի քանի պաշտօնեաներու սրատաքսումը թէև ըստ երևոյթին քմահեն կը թուէր, սակայն արդար և անհրաժեշտ միջոց մ'էր։ Կայսրուհին անկեղծօրէն կը փափաքի ստուգութիւնը իմանալ. պաշտօնեաները և կառավարութիւնը անընդհատ հեռագրի կը դիմեն, բայց Եւրոպոյ չինացի դործակալները շարունակ այնպիսի անախորժ տեղեկութիւններ կը հաղորդեն, որ Բէքինի վարչական իշխանութեան մէջ շփոթ կ'առաջնորդեն և զայն կ'առաջնորդեն դարձուցանել իր դեսպանագիտութիւնը Եւրոպոյ քաղաքականութեան հոսանքին բաղդատմամբ, իրաց ստոյգ նշանակութեան վրայ՝ Չինաստան բնակող փորձառու փորձառու օտարականներուն առանց խորհուրդ հարցնելու։ Գործնական երկար կրթութիւն մ'անհրաժեշտ է Չինացւոց այս նոր գործին իմաստորէն գործածելու համար։

Վերջապէս հնար է ըսել որ նոր դէպքերը և հաղորդակցութեան միջոցներու բարելաւութիւնը՝ ազգային զգացումի նման այնպիսի բան մը յառաջ բերին, որ ասկէ առաջ երբէք տեսնուած չէր սոյն երկրին մէջ։ Այժմ [illegible] մի մը մէկ գաւառին միջոցները գործածել՝ ուրիշ գաւառ մ'ընկճելու համար։

Չինաստանէն վերջին թղթաբերը մեկնած ժամանակ՝ Քու�պէ ծովակալը երկու մարտանաւով Քէլունկ կը դտնուի. Էսբէս ծովակալը Ֆորմոզայի հարաւային կողմին պաշարման կ'զբաղի և գաղդիացի նաւերէն չատերը Մացուի առջև խարսխած են եղեր։ Ֆրանսացի զօրքերը այն բարձրութիւններու վրայ ամրացեր են; ուսկից Չինացիք վանուած էին, միայն թէ ականները դեռ չեն դրաւած։

Բաղաքը պարպելէ առաջ՝ կայսերականները ուզեր են կրակ ձգել քարիւղով նաւամատոյցին մօտ մէջերուած հանքածուխին; սակայն լաւ չեն յաջողած։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Լորտերու Խորհրդարանին մէջ լրտ Նորթպրուք գիտել կուտայ թէ՝ անիրաւութիւն է Եգիպտոսի ազգային պաշտօնեներու մէջ մի-

միայն օտարներ գործածել, բնիկները բոլորովին դուրս թողլով։

Լորտ Սալիզպըրի կը յայտարարէ թէ՝ այս մասին կառավարութեան տալիք որոշումը այնպիսի կարևորութիւն մը պիտի ունենայ, որու արդիւնքն անհնար է դուշակել՝ այն պարագային մէջ, ուր Եգիպտացոց նախամեծարութիւն մը տրուի։

Լորտ Կրանվիլ կը գանգատի թէ Սալիզպըրի մարքիզին դիտողութիւնները այնպիսի միտում մ'ունին, որ կարծել կուտայ թէ Անգլիա պարտի օգտիլ իր ենդիպասոի մէջ ունեցած դիրքէն՝ բոլորովին անգլիական քաղաքային վարչութիւն մը հաստատելու համար։

Դահիրէէն «Քորէսպոնտանս Բարլիթիքի» կը ծանուցանեն թէ անգլիական բանակը, որ Խարթումը և Կորտան զօրավարն ազատելու նպատակ ունի, նոր յապաղումներ կրեր է։ Զօրավար Վոլսլէյ կը թելադրուի սպասել իւր բոլոր զօրութիւնը ի Տէպպէ խմբել։ Մինչև ցարդ 9,000 հոգի անցեր են ընդամենը Ասուանէն։

Տալէն կը հեռագրեն «Տէյլի Թէլէկրաֆիի» թէ՝ քիչէն անհնար պիտի ըլլայ նաւերը Մէրավիէն անդին անցուցնել։

Վոլսլէյ զօրավարը լուր առեր է Սուաքիմէն թէ ապստամբները 42 ուղտ գրաւեր, մէկ մարդ սպաններ և երկուք ալ վիրաւորեր են։ Եգիպտական ամրոցին 800 եարտա չրջանակի մէջ մէկ ոչ կեանքի ապահովութիւն կայ ոչ ալ քնչի։

«Մեմորիալ Տիբլոմաթիք» կը ծանուցանէ թէ լորտ Կրանվիլ և Պ. Վատինկթոն որոշեր են զի այս վերջինը Բարիզ դայ՝ Ժիւլ—Ֆէրրիի հետ խորհրդակցելու համար՝ Եգիպտոսի ելևմտական կարգադրութիւններու նկատմամբ, և այս մասին անգլիական կառավարութեան դիտողութիւնները մանրամասնօրէն պարզէ իրեն։ Անգլիա թէև կը հաւանի լսել և քննել հակառաջարկ մը՝ եթէ ունի Ֆրանսա իւր վերջին առաջարկութեանց դէմ, սակայն նախնի դրութեամբ հանդուրժ մը չընդունիր բնաւ։ Բանակցութիւնք տակաւին պիտի շարունակուին ութը տասը օր։ Բ. Դուռը այն ատեն միայն պիտի տայ իր պատասխանը, երբ միւս տէրութիւնք իրենց կարծիքը յայտնեն։ Լոնտրայի գերմանական դեսպանատան մէջ բոլորովին կ'ուրանան թէ՝ Պիզմարք իշխանը դաղտնապէս կը դրդէ Ֆրանսա մերժել անգլիական առաջարկները։

Ֆրանսական հանրապետութեան և Մարոքի միջև եղած խնդիրը՝ հաշտարար լուծումի մը կը գտնէ։ Նոյեմբեր 24ին Մարոքի Արտաքին գործոց պաշտօնեայն ուրիշ երեք պաշտօնեաներու հետ՝ Պ. Օրտէկիայի կը ներկայէ Սուլթանին ինքնագիր մի նամակը ի պատասխանի նոյեմ. 24ին տրուած գրութեան մը, ուրով գաղղիական կառավարութեան տեղեկութեանց համեմատ՝ ջերմ բանակցութիւններ կը շարունակուին այժմ Պէրլինի, Բարիզի և Բեդրսպուրգի դահլիճներուն միջև՝ Եգիպտոսի ելևմտական կարգադրութիւններու նկատմամբ, և այս մասին անգլիական կառավարութեան դիտողութիւնները մանրամասնօրէն պարզէ իրեն։ Անգլիա թէև կը հաւանի լսել և քննել հակառաջարկ մը՝ եթէ ունի Ֆրանսա իւր վերջին առաջարկութեանց դէմ, սակայն նախնի դրութեամբ մը չընդունիր բնաւ։ Բանակցութիւնք տակաւին պիտի շարունակուին ութը տասը օր։ Բ. Դուռը այն ատեն միայն պիտի տայ իր պատասխանը, երբ միւս տէրութիւնք իրենց կարծիքը յայտնեն։ Լոնտրայի գերմանական դեսպանատան մէջ բոլորովին կ'ուրանան թէ՝ Պիզմարք իշխանը դաղտնապէս կը դրդէ Ֆրանսա մերժել անգլիական առաջարկները։

«Ֆիգարոյ» տրուած տեղեկութեանց համեմատ՝ ջերմ բանակցութիւններ կը շարունակուին այժմ Պէրլինի, Բարիզի և Բեդրսպուրգի դահլիճներուն միջև՝ Եգիպտոսի ելևմտական վիճակի մասին, Անգլիոյ ըրած առաջարկներու նկատմամբ։ Կ'ըսուի թէ Ռուսիա և Աւստրիա իրենց աջակցութիւնը խոստացեր են այն երկու հակառաջարկներու համար՝ զոր պիտի ընէ գաղղիական կառավարութիւնը։

Խարթումէն Տանկոլա հանող լրաբեր մը կը հաստատէ թէ՝ Մէհտին Խարթումէն երեք ժամ հեռու կը գտնուի։

ՄՈՐՈՔ

Ֆրանսական հանրապետութեան և Մարոքի միջև եղած խնդիրը՝ հաշտարար լուծումի մը կը գտնէ։ Նոյեմբեր 24ին Մարոքի Արտաքին գործոց պաշտօնեայն ուրիշ երեք պաշտօնեաներու հետ՝ Պ. Օրտէկիայի կը ներկայէ Սուլթանին ինքնագիր մի նամակը ի պատասխանի նոյեմ. 24ին տրուած գրութեան մը, ուրով գաղղիական կառավարութիւնը Ֆէսի մէջ իւր հիւպատոսին և հպատակներուն դէմ կատարուած անախորժ անցից և ինչ ինչ անիրաւութիւններու համար գոհացում կը պահանջէր։ Սուլթանը այսու կը հրամայէր նիւթական և բարոյական գոհացում մը տալ այն կերպիւ՝ ինչպէս որ դաղղիական պաշտօնեայն յարմար կը դատէր։

# ԱԶԳԱՅԻՆ

## ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ԱՌԹԻՒ

Հեռաւորը մեզ գրկուած է ի հրատարակութիւն, որ ինչպէս կը տեսնուի տեղւոյս Ռուսումնական խորհրդոյ մի ծանուցեալ առաջարկը ընդունելու համար ինչ ինչ միջոցներ կը ներկայէ գաւառս Երեսփոխանական ընդհ. ժողովոյ։ Ցայտնի է որ Գաւառ. ժողովը որքան ալ Ռուսումնական խորհրդոյ առաջարկը օրինաւոր և բանաւոր նկատած էր՝ սակայն չէր ընդունած, ազգ. արկղի նեղ վիճակը պատճառ ցոյց տալով։ Այս վիճակի տապնալը որքան ալ պաշտօնական յայտագիրներ աքսորել նկրտին՝ մեր բանաստի դիտողութիւնները անուղղակի կերպով հերքելու փափաքով՝ արդէն Ռուսումն. խորհրդոյ առաջարկի մերժումը և ազգ. մի քանի կալուածներու վաճառումը դժբաղդաբար անհերքելի կերպով զայն կը հաստատեն։ Ինչ որ ալ ըլլայ՝ այս մասին ինչ ինչ գրութիւններ ունենալով հրատարակելի, առայժմ սա կը յայտնենք միայն զի՝ քանի որ Երեսփ. ժողովը ինքնին չէ կրցած Ռուսումն. խորհրդոյ առաջարկը ի գործ դնելու միջոց մը խորհիլ, երբ այդպիսի միջոց մը ներկայի պէտք չէ անտարբեր դանուիլ, այլ ուշի ուշով ի նկատի առնուլ, և առնոր հեղինակներուն խնդիրը ի գործ դնել ի նպաստ և ի բարգաւաճումն ազգ. կրթութեան, մանաւանդ թէ երբ այդ առաջարկի հեղինակներն քաղքիս հայ երիտասարդութեան բանիբուն, ողջամիտ, փոյթեռանդ և պատուաւոր մասին կը պատկանին։

Ա. Գերապատիւ Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս Առաջնորդ Զմիւռնիոյ և Նախագահ Գաւառական Ընդհ. Ժողովոյ.

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ցայտնի է որ ամեն բարեփոխութեան և ամեն յառաջադիմութեան կարևորագոյն միջոցն է դրամը, և մեր մէջ ամեն գովելի և ազգօգուտ նպատակներու խորհուրդներ՝ սակայն այս միջոցի պակսութեան պատճառաւ անգործադրելի կը մնան։ Ձիշդ միևնոյն պատճառաւ այժմ կը մերժուի քաղքիս Ռուսումնական Խորհրդոյ այն առաջարկը, որով բանիբուն խորհուրդը խնդրէ Ազգ. Վարչութենէն զի ազգային վարժարաններու արդէն յատկացեալ տարեկան գումարին վրայ 2,500 մէճիտի յաւելում մը լինի։

Այս առաջարկ որքան ալ գովելի և որքան ալ բանաւոր, և այսպիսի խորհուրդներ Սրբազնութեանդ մօտ որքան ալ սիրելի լինին՝ դարձեալ ինչպէս յայտնի է, անընդունելի կը նկատուի այն՝ Գաւառական Ընդհանուր Ժողովոյդ կողմէ, առարկուելով թէ ազգային արկղի անձուկ վիճակը չիներկեր նոր ծախսից յաւելում մը և միմիայն 150 մէճիտ որոշել կարելի կը լինի։ Պատուարժան Ռուսումնական Խորհրդոյ առաջարկը անուրանալի է որ այնքան բանաւոր է որքան անհրաժեշտ զայն ընդունիլ. քանի որ ծանօթ է ամենուս որ մեր ազգային վարժարանները մի մեծ և հիմնական բարեփոխութեան պէտք ունին, ուստի և այդ պէտքը լրացնելու համար Ռուսումն. Խորհրդոյ առաջարկը ընդունելու հեթիւնը Ձեզի մէջ իւր հիւպատոսին և հպատակներուն դէմ կատարուած անախորժ անցից և ինչ ինչ անիրաւութիւններու համար գոհացում կը պահանջէր։ Սուլթանը այսու կը հրամայէր նիւթական և բարոյական գոհացում մը տալ այն կերպիւ՝ ինչպէս որ դաղղիական պաշտօնեայն յարմար կը դատէր։

## ԱԶԳԱՅԻՆ

## ԵԼԵՒՄՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ԱՌԹԻՒ

Հեռաւորը մեզ գրկուած է ի հրատարակութիւն, որ ինչպէս կը տեսնուի տեղւոյս Ռուսումնական խորհրդոյ մի ծանուցեալ առաջարկը ընդունելու համար ինչ ինչ միջոցներ կը ներկայէ գաւառս Երեսփոխանական ընդհ. ժողովոյ։ Ցայտնի է որ Գաւառ. ժողովը որքան ալ Ռուսումնական խորհրդոյ առաջարկը օրինաւոր և բանաւոր նկատած էր՝ սակայն չէր ընդունած, ազգ. արկղի նեղ վիճակը պատճառ ցոյց տալով։ Այս վիճակի տապնալը որքան ալ պաշտօնական յայտագիրներ աքսորել նկրտին՝ մեր բանաստի դիտողութիւնները անուղղակի կերպով հերքելու փափաքով՝ արդէն Ռուսումն. խորհրդոյ առաջարկի մերժումը և ազգ. մի քանի կալուածներու վաճառումը դժբաղդաբար անհերքելի կերպով զայն կը հաստատեն։ Ինչ որ ալ ըլլայ՝ այս մասին ինչ ինչ գրութիւններ ունենալով հրատարակելի, առայժմ սա կը յայտնենք միայն զի՝ քանի որ Երեսփ. ժողովը ինքնին չէ կրցած Ռուսումն. խորհրդոյ առաջարկը ի գործ դնելու միջոց մը խորհիլ, երբ այդպիսի միջոց մը ներկայի պէտք չէ անտարբեր դանուիլ, այլ ուշի ուշով ի նկատի առնուլ, և առնոր հեղինակներուն խնդիրը ի գործ դնել ի նպաստ և ի բարգաւաճումն ազգ. կրթութեան, մանաւանդ թէ երբ այդ առաջարկի հեղինակներն քաղքիս հայ երիտասարդութեան բանիբուն, ողջամիտ, փոյթեռանդ և պատուաւոր մասին կը պատկանին։

Ա. Գերապատիւ Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս Առաջնորդ Զմիւռնիոյ և Նախագահ Գաւառական Ընդհ. Ժողովոյ.

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ցայտնի է որ ամեն բարեփոխութեան և ամեն յառաջադիմութեան կարևորագոյն միջոցն է դրամը, և մեր մէջ ամեն գովելի և ազգօգուտ նպատակներու խորհուրդներ՝ սակայն այս միջոցի պակսութեան պատճառաւ անգործադրելի կը մնան։ Ձիշդ միևնոյն պատճառաւ այժմ կը մերժուի քաղքիս Ռուսումնական Խորհրդոյ այն առաջարկը, որով բանիբուն խորհուրդը խնդրէ Ազգ. Վարչութենէն զի ազգային վարժարաններու արդէն յատկացեալ տարեկան գումարին վրայ 2,500 մէճիտի յաւելում մը լինի։

Այս առաջարկ որքան ալ գովելի և որքան ալ բանաւոր, և այսպիսի խորհուրդներ Սրբազնութեանդ մօտ որքան ալ սիրելի լինին՝ դարձեալ ինչպէս յայտնի է, անընդունելի կը նկատուի այն՝ Գաւառական Ընդհանուր Ժողովոյդ կողմէ, առարկուելով թէ ազգային արկղի անձուկ վիճակը չիներկեր նոր ծախսից յաւելում մը և միմիայն 150 մէճիտ որոշել կարելի կը լինի։ Պատուարժան Ռուսումնական Խորհրդոյ առաջարկը անուրանալի է որ այնքան բանաւոր է որքան անհրաժեշտ զայն ընդունիլ. քանի որ ծանօթ է ամենուս որ մեր ազգային վարժարանները մի մեծ և հիմնական բարեփոխութեան պէտք ունին, ուստի և այդ պէտքը լրացնելու համար Ռուսումն. Խորհրդոյ առաջարկը ընդունելու հեթիւնը Ձեզի մէջ իւր հիւպատոսին և հպատակներուն դէմ կատարուած անախորժ անցից և ինչ ինչ անիրաւութիւններու համար գոհացում կը պահանջէր։ Սուլթանը այսու կը հրամայէր նիւթական և բարոյական գոհացում մը տալ այն կերպիւ՝ ինչպէս որ դաղղիական պաշտօնեայն յարմար կը դատէր։

Ա.— Ազգ. Դիւանատան տարեկան ծախքէն 500 մէճիտ դեղչել, հաւասար քլլալով որ այսպիսի դեղչով մը Ազգ. Դիւանատունը կրնայ միևնոյն գործը կատարել ինչպէս ցարդ։

Բ.— Ազգ. Հիւանդանոցի տարեկան ծախքէն 1,500 մէճիտ դեղչել և այս պակսած կամ դեղչուած գումարը հայթայթել ամեն տարի պարահանդէս մը տալով ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի։ Հիւանդանոց մ'աւելի քաղաքի մ'ամեն հասարակութիւններու վերաբերելու բնութիւնը և յարմարութիւնն ունի, քան թէ դպրոց մը, ուստի ի նպաստ Ազգային Հիւանդանոցի տրուած պարահանդէս մը քաղքիս ամեն հասարակութիւններու կողմէ սիրով կ'ընդունուի, և փափաքելի արդիւնքներ աւելի դիւրաւ կը ստացուին։ Նաև արդէն Եորակառոյց Հովիփսիմեան վարժարանին մէջ յատկապէս պարահանդէսի համար որահներ շինուեցան. ինչու այդ տրուելիք պարահանդէսներու արդիւնքը ի նկատի չառնուի, և կամ ինչու մեծամեծ գումարներ ծախսուին պարահանդէսի որահներ պատրաստելու համար և ի վերջոյ զանոնք արդիւնաւորելու փոյթ չիտարուի։

Ցայտնի կը տեսնուի որ սոյն միջոցը որ մեր ներկայած ծրագրին գլխաւոր կէտը կը կազմէ նոր չէ, և արդիւնաւորութեան ու գործադրելիութեան ամեն հանգամանք ունի, միայն թէ կը մնայ այսպիսի անհրաժեշտ և նեղ պարագայի մէջ օգտիլ անկէ աւելի իրական և գործնական ձևի մը վերածելով, զայն որով միջոցի՝ եւս կը յատացուի Պատ. Ռուսումն. խորհրդոյ առաջարկը եթէ ոչ ամբողջովին գէթ մեծ մասամբ ընդունելու։

Սրբազան Սրբազան Տէր, հաւատի քլլալով որ այս երկու կէտերէ բաղկացեալ մեր ծրագիրը չը պիտի մերժուի Պատկառելի Դաւառ. Ընդհ. Ժողովոյդ կողմէ և Ռուսումն. խորհրդոյ առաջարկը ինչպէս բոլոր ազգայնոց նոյնպէս և մեր փափաքին համեմատ պիտի ընդունուի անյապաղ, կանխաւ մատուցանելով մեր շնորհակալիքը Մեծամ խոնարհաբար

(Ստորագրութիւն)

## ՆԱՄԱԿԱՆԻ

## ԳԱՐԱԹԱՇ

Մեծ. խմբագիր «Արշալոյս Արարատեան» ազատախօս լրագրոյ.

Եթէ Դարաթաշի պէս անշուք թաղի մ'ազգային անցից մասին տեղեկութիւններ ձեր ազնիւ ընթերցողաց կրնան ոչ այնքան կարևոր թուիլ, հարկ է միանգամայն ի նկատի առնուլ թէ ամենէն անչնչաւոր պարագաներու մէջ կը պատահին ստէպ այնպիսի կէտեր որոնք գործող մարմիններու ոգին և սիրաը այնպէս մը կը մատնեն որքան չեն կրնար հաստատել թերևս երկար փաստարանութիւններ։

Ահա այս պատճառաւ էր որ նախորդ նամակաս խոստացայ մեր ազգային խնդրոյն մասին հեռագրեմ տեղեկութիւններ հաղորդել։ Ձեզ ի հրատարակութիւն, թէև իրաւ է որ միևնոյն ժամանակ չէի յուսար թէ անմիջական դէպքեր պիտի ստիպեն զիս ի մօտոյ գրկին խօսիլ, բաստ որում որքան ալ մեր մէջ տիրող ՈՒԻՆ լիովին ծանօթ ըլլայ ինձ, չէի կարծեր, կամ չէի ուզեր կարծել թէ իրողութիւնները այսքան արագօրէն իրարու պիտի յաջորդեն, և անեման գործունէութիւն մը պիտի տիրէ հոն՝ ուր ընդ հանրապէս . . . . . տեսեալ միջոցները խորհեցանք։

Ա.— Ազգ. Դիւանատան տարեկան ծախքէն 500 մէճիտ դեղչել, հաւասար քլլալով որ այսպիսի դեղչով մը Ազգ. Դիւանատունը կրնայ միևնոյն գործը կատարել ինչպէս ցարդ։

Բ.— Ազգ. Հիւանդանոցի տարեկան ծախքէն 1,500 մէճիտ դեղչել և այս պակսած կամ դեղչուած գումարը հայթայթել ամեն տարի պարահանդէս մը տալով ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի։ Հիւանդանոց մ'աւելի քաղաքի մ'ամեն հասարակութիւններու վերաբերելու բնութիւնը և յարմարութիւնն ունի, քան թէ դպրոց մը, ուստի ի նպաստ Ազգային Հիւանդանոցի տրուած պարահանդէս մը քաղքիս ամեն հասարակութիւններու կողմէ սիրով կ'ընդունուի, և փափաքելի արդիւնքներ աւելի դիւրաւ կը ստացուին։ Նաև արդէն Եորակառոյց Հովիփսիմեան վարժարանին մէջ յատկապէս պարահանդէսի համար որահներ շինուեցան. ինչու այդ տրուելիք պարահանդէսներու արդիւնքը ի նկատի չառնուի, և կամ ինչու մեծամեծ գումարներ ծախսուին պարահանդէսի որահներ պատրաստելու համար և ի վերջոյ զանոնք արդիւնաւորելու փոյթ չիտարուի։

Ցայտնի կը տեսնուի որ սոյն միջոցը որ մեր ներկայած ծրագրին գլխաւոր կէտը կը կազմէ նոր չէ, և արդիւնաւորութեան ու գործադրելիութեան ամեն հանգամանք ունի, միայն թէ կը մնայ այսպիսի անհրաժեշտ և նեղ պարագայի մէջ օգտիլ անկէ աւելի իրական և գործնական ձևի մը վերածելով, զայն որով միջոցի՝ եւս կը յատացուի Պատ. Ռուսումն. խորհրդոյ առաջարկը եթէ ոչ ամբողջովին գէթ մեծ մասամբ ընդունելու։

Սրբազան Սրբազան Տէր, հաւատի քլլալով որ այս երկու կէտերէ բաղկացեալ մեր ծրագիրը չը պիտի մերժուի Պատկառելի Դաւառ. Ընդհ. Ժողովոյդ կողմէ և Ռուսումն. խորհրդոյ առաջարկը ինչպէս բոլոր ազգայնոց նոյնպէս և մեր փափաքին համեմատ պիտի ընդունուի անյապաղ, կանխաւ մատուցանելով մեր շնորհակալիքը Մեծամ խոնարհաբար

(Ստորագրութիւն)

## ՆԱՄԱԿԱՆԻ

## ԳԱՐԱԹԱՇ

Մեծ. խմբագիր «Արշալոյս Արարատեան» ազատախօս լրագրոյ.

Եթէ Դարաթաշի պէս անշուք թաղի մ'ազգային անցից մասին տեղեկութիւններ ձեր ազնիւ ընթերցողաց կրնան ոչ այնքան կարևոր թուիլ, հարկ է միանգամայն ի նկատի առնուլ թէ ամենէն անչնչաւոր պարագաներու մէջ կը պատահին ստէպ այնպիսի կէտեր որոնք գործող մարմիններու ոգին և սիրաը այնպէս մը կը մատնեն որքան չեն կրնար հաստատել թերևս երկար փաստարանութիւններ։

Ահա այս պատճառաւ էր որ նախորդ նամակաս խոստացայ մեր ազգային խնդրոյն մասին հեռագրեմ տեղեկութիւններ հաղորդել։ Ձեզ ի հրատարակութիւն, թէև իրաւ է որ միևնոյն ժամանակ չէի յուսար թէ անմիջական դէպքեր պիտի ստիպեն զիս ի մօտոյ գրկին խօսիլ, բաստ որում որքան ալ մեր մէջ տիրող ՈՒԻՆ լիովին ծանօթ ըլլայ ինձ, չէի կարծեր, կամ չէի ուզեր կարծել թէ իրողութիւնները այսքան արագօրէն իրարու պիտի յաջորդեն, և անեման գործունէութիւն մը պիտի տիրէ հոն՝ ուր ընդ հանրապէս . . . . .

Անցեալ շաբթու մէջ տեղւոյս ազգայինք հաղիւ հազ կ'իմանան Իզմիրի Ազգ. Վարչութեան այն անօրինութիւնը, որով իւր կազմած Թաղ. Խորհրդոյ կը պատուիրէր թաղիս Ս. Վարդանեան կրթարանի շէնքը՝ որ ազգային սեպհականութիւն մ'է և ուր 30—60 ուսանող մանուկներ կը յաճախեն, վարձու տալ քանի մը տարի և նոյն վարձքէն գոյացած արդիւնքով մեր քահանային յատուկ բնակարան մը շինել տալ. հաղիւ հազ կ'ըսենք այս անօրինութիւնը կ'իմացուի, և ահա կիրակի օր . . . քաջածանօթ Պ. Ս. Լազեան և ուրիշ երկու անձեր կը ներկայանան կրթարանի միակ ուսուցչին, և կը սպառնան տեմիջապէս զայն պարպել։ Պարկեշտ ուսուցիչը ինչ ինչ դժուարութիւններ ցոյց տալէ ետև՝ 10—15 օր պայմանաժամ կը խնդրէ Ազգ. Վարչութեան Բ—ՐՐ—Բ—Ի անօրինութիւնը գործադրելու։ Զարմանալին այն է որ Ազգ. Վարչութեան այս գործակատարները չեն ժամր բռնական միջոցներու ձեռնարկել, և ուստի խնդրուած պայմանաժամը լրացաւ մեկնելով՝ շնորհած կը լինին. և իրաւ է որ ամեն անիրաւութեան, ամեն ապօրինաւորութեան մէջ տեսակ մը վեհերոտութիւն կայ միշտ, վեհերոտութիւն մը՝ որ թերևս խոցի և հոգեկան միւս կարողութիւններու անհամաձայնութենէն յառաջ կուգայ. բայց այս կէտերը թողունք իմաստասիրին խորհրդածել, և մենք գանք մեր խնդրոյն։

Ազգային վարչութեան գիւղիս միակ կրթարանը փակելու անխորհուրդ եռանդը անհնարին տագնապով մը կը յուզէ համայն ժողովուրդը և ինչպէս սովոր է այսպիսի պարագայներու մէջ՝ տեմիջապէս հանրադրութիւն մը կը պատարաստուի մի և նոյն Պատ. Ժողովոյ Սրբազան Նախագահին ուղղեալ. որով կը խնդրուի անյապաղ անմիջական հրահանգ և հրաման ուր որ անկ է՝ նոր Թաղական խորհրդոյ մը ընտրութեան համար ժողովրդեան քուէարկութեամբ ինչպէս որ կը պահանջէ օրէնքը։ Մինչև ցարդ քառասունէն աւելի անձինք ստորագրած են մի և նոյն հանրագրութիւնը, ուր յայտնուած էական խնդիրը եթէ յօժարի Ազգ. վարչութիւնը ընդունիլ, տարակոյս չ'կայ որ վերջ պիտի տայ այն ամէն յուզմանց որով Դարաթաշի պէս հանգարտիկ թաղ մը կը վրդովի մի քանի ամսէ ի վեր։

Ի՞նչու հանգարտիկ չլինի թաղ մը որու բոլոր ազգ. գործերը կ'ամփոփուին մի մատառ և մի նախնական կրթարանի մատակարարութեան մէջ. բայց պէտք է յիշել որ երբ այդ համեստ մատակարարութեան մէջ օտար ձեռքեր միջամուխ կը լինին, երբ ինչ որ ժողովրդեան կը վերաբերի ընտրել՝ ուրիշները կը ընտրեն, երբ ի՛նչ որ ժողովրդեան ընտրելիք մարմնոյն կը պատկանի տնօրինել այլք կը տնօրինեն՝ բնականաբար կաց, կռիւ, վէճ և յուզմունք յառաջ կուգան ամենէն մեղմաբարոյ, ամենէն անխռով ընկերութիւններու մէջ իսկ։ Եւ այդ ամեն յուզմանց թէ օրինական թէ բարոյական պատասխանատուութիւնը կը վերբերին անոնց որոնք, ժողովրդեան մէջ իրաւունքը ըբռնաբարելով այսպիսի անհաճոյ և ցաւալի եղելութիւններու պատճառ և հեղինակ կը դառնան։

Այս առթիւ չ'նենք կրնար առանց յիշատակութեան անցնիլ թէ տեղւոյս բարեկամ ուսուցիչը Պ. Ծաղիկեան ալ Իզմիրի Կրօնական Ժողովէն զիր մը կը ընդունի, որով կազդարարուի իրեն կրթարանի աշակերտաց անբարեսպաշտ խրատներ և յորդորներ տալէ զգուշանալ, բստ որում Կրօնական Ժողովոյ Արժ. հարք իրը թէ լսած են եղեր զի Պ. Ծաղիկեան յորդորեր է աղայոց եկեղեցի չերթալ։ Իրաւ է որ աղայքը եկեղեցի չ'գրկելու խօսքեր եղան ասա, բայց ոչ թէ Պ. Ծաղիկեանի կողմէ, այլ նոյն-իսկ ծնողաց կողմէ որոնք մասնաւոր գումարման մը մէջ որոշած են իրենց զաւակները ժամանակ մը եկեղեցի չ'գրկել, որպէսզի քահանան և առանձին չ'կրնալով ժամերգութիւն կատարել սոսկալի թաղիս քահանայութեան պաշտօնէն հրաժարիլ։ Բայց ինչպէս որ ժամանակ մը առաջ ամեն անիրաւ պահանջ իրաւացի ընելու և ամեն ապօրէն խնդիր արդարացնելու միակ միջոցն Հ—ԱԳԷ—ԳԷՆ էր, նոյնպէս և մեր մէջ կարծես այժմ արդէն նպատակ մը յառաջ տանելու հնարը Կրօնական ժողովոյ ազդագիրն է։

Կերևի թէ Կրօնական ժողովը կրօնը կը կարծէ դաւանիլ այն անձնաւորութեան մէջ, որ Ս. Աւետարանի շնչով շնչուած է միայն, բստ որում ուր որ շարժում կը թափէ միևնոյն անձնաւորութեան հոգերուն տնօրինութիւններու հակառակ՝ անդ կրօնի դէմ ոտառնտաղ չարիք կը կարծէ տեսնել, ուստի առանց վարանելու ի նիստ կը դումարի պատրաստելու կամարդէն պատրաստուած ազդագիրներ ստորագրելու և կնքելու համար։ Իրաւ է որ եթէ թաղիս ուսուցիչը փոքր ինչ ոչ թէ ազատ խօսողայլ ազատ խորհող չըլլար՝ անշուշտ այդ ազդագրին հարկ չպիտի մնար։ Պատ. Կրօն. Ժողովոյ այն ամբաստանութիւնը զոր իւր կը վերագրէ Պ. Ծաղիկեանի բստ ինքեան կը ցրի, երբ ի նիստ առնուն զի՝ եթէ նա իրօք կը-թարանի ազդայոյ յորդորած լինէր եկեղեցի չերթալ, ամենէն առաջ անոնց ծնողքը պիտի լսէին զայն, պիտի սրդողէին և եկեղեցիքը պիտի յայտնէին որ որ անկ է։ բայց որովհետև բոլորովին տեղի ունեցած չէ այդպիսի յորդոր մը Պ. Ծաղիկեանի կողմէ ոչ ոք տեղեկութիւն ունի ասա, և ուստի Կրօն. Ժողովոյ ազդագիրը ամենուն զարմանքն ու ծիծաղն շարժեց։

Ինչ որ ալ ըլլայ սա ստոյգ է որ եթէ Պ. Ծաղիկեան մեր Արժ. քահանային պէս ունենար այն անձնուիրութիւն որ ընդհանրապէս մեր մէջ կը տեսնուի աւետարանի շնչով ներշնչուած ողիներու համար՝ ոչ միայն այսպէս չէր հալածուեր, այլ եթէ իրօք միևնոյն յանցանքն ալ գործ լինէր՝ թերևս պաշտպանութիւն գտնէր և թերևս մինչև անգամ եկեղեցւոյ շէնքն ալ վարձու տրուէր՝ նոր բնակարան մը շինելու համար, ինչպէս կրթարանի շէնքը այժմ կուզուի վարձու տրուիլ կը սեպն՝ քահանային բնակարան մը շինել տալու նպատակաւ։

Դարաթաշ, 4 դեկ. 1884.

ՍԻՄԱՆ

Կ. Պոլիս, 29 նոյ. 1884.

Ազնիւ բարեկամ

Մեր կենաց չրջանին մէջ՝ կը պատահին երբեմն այսպիսի դառն և աղետալի պարագաներ, որ մարդ կամ ի սպառ հրաժեշտ տալ կը փափաքի կեանքէ, կամ իւրովի կը կարծէ դադարած լինիլ տարելի։ Կարծես ա՛լ միևնոյն միջոցին սկսեալ աշխարհ և ամեն առարկայ անգոյութեան կը դառապարտուին, և ամէն կարկեր մեռելութեան։ Կեանքը ալ ևս եթէ ոչ տաժանելի բեռ մը կը դառնայ՝ գէթ նշանակութիւն չունենար, բստ որում եթէ նոր ի նորոյ սա՝ ողջունի վայրկեան նոր ցաւեր և նոր վիշտեր բերել չեն սպառնար բոլորովին գէթ

անորոշ և անիմաստ նպատակի մը առաջնորդելու կրծատայեն կարծեմ։ Այսպիսի պահու մը մէջ ամենէն արդէաը իսկ իմաստասէր կը դառնայ և ինք իր մէջ ամփոփուելով՝ մանրերորդի պէս սահեղ անցեալի մը վրայ արհամարհական ակնարկ մը կը ունենայ, և աւելի արհամարհական կը դիտէ այն ապագայ կեանքը՝ որ իր առջև կը պարզի իր կամքին հակառակ, բան որում այսպիսի դառն փայրկեաններու մէջ ամէն ինչ կը մթագնի, ամէն ինչ կը տխրի և ոչինչ կարել կը լինի յուսալ։

Ձիշդ այսպիսի միջոց մը եղաւ ինչպէս բոլոր Հայութեան՝ նոյնպէս եւ ինձի համար հոգելոյս Ներսէս Արբազանի դառն մահը։ կարծես թէ հայութեան ապագայն մթագնեցաւ, և հոն ուր յուսոյ նշոյլներ կը շողային ջնարիւ երջանկայիշատակ Հայրապետի կարծես ամէն յոյս փարատեցաւ, և թէ նորա յուզարկաւորութեան եւայլն հանդէսներու և թէ սանդարմանելի կորստեան մը տխրութիւն ապդեցութեան ներքև, ակամայ հրաժեշտ արուի ոչ միայն ազգային գործերու եւ խղճիներու վրայ խօսելէ և գրելէ, այլ քիչ շատ խորհելէ։ Երբ այս տողերը կարդաք անշուշտ ներոգամիտ պիտի դանուիք ինձ իմ լռութեան համար, բան որում անոնք միայն կրնան ճիշդիւ կշռել ուրիշներու ցաւը կամ անոնք միայն իրենց նմաններու ցաւերուն վշտա՛ից կշռանուին, որոնք կրնան կամ դիտեն զգալ։

Ոչ միայն բոլոր հայութիւնը այլ օտարք անգամ տխրութեամբ ընդունեցին Ներսէսի մահուան գոյժը։ բան որում մեծ է այս մեծ մարդուն կորուստը և անդարմանելի։ Արդէն այլ և այլ կենսագրութիւններ եւայլն բան բաւականի հրատարակուեցան թէև, բայց այս մասին որքանչալ խօսի մարդ քիչ է։ Ներսէս ոչ միայն իր նատաստիսոին վարին ու պատիւը աւելցուց ոչ միայն ինչպէս ակնարկեց պերճաբան եպիսկոպոսը իւր նշանաւոր գամբանականին մէջ՝ ազգին զգացումները բարձրացուց, այլև մի անձնաւորութիւն դարձաւ այն մեծ գաղափարին դոր ինք ծնաւ, և որ իւր յիշատակին հետ անտարակոյս կենդանի պիտի մնայ մինչ այն օրը՝ ուր պիտի մնայ հայմը իսկ աշխարհի վրայ։ Այս պատճառաւ այս մեծ անձնաւորութեան մահը ընդհանուր ազգին մէջ ոգոյ և տխրութեան օրեր եղան։ ամեն տեղեր սուգ պահեցին և կատարեցին հոգեհանգստեան պաշտօններ, ինչպէս որ արժան էր այս երջանկայիշատակ Հայրապետին։ Իրաւ է որ զուք գանգատեցաք թէ ձեր քաղքին մէջ այդ պաշտօն կատարուեցաւ այնպիսի անշուք և անշան կերպով մը, որպէս թէ պարզ եպիսկոպոսի մը կամ պաշտօնեայի մը յիշատակ։ Բայց անոնք որ այդ կէտին մէջ այդպէս վարուիլ կըսիրէին, չ'վարանեցան բոլորովին ներհակ կերպով հրատարակել տալ իրողութիւնը տան թէ Աբէլէի և թէ Հայրենիքի մէջ, որով ոչ միայն նուիրական պարտաւորութեան մը մասին պարտապանց գտնուեցան, ոչ միայն կլցան գործել ինչ որ գիտէին թէ պարտ էր գործել, այլ միանգամայն ստեցին, այո՛ ստեցին և ո՞ւր։ — բուն իսկ գաղափի մը առջև, և սուրբ ու վեհ անձի մը դագաղին առջև, ուր մարդ կրկին և կրկին պարտաւորութիւն մը կը զգայ կարծես աշխարհային ամեն վատ և գեռշ կիրքեր վանել իւր սրտէն։ Զարմանալին այն է որ Հայրենիքի թղթակից մը որ դեռ քիչ առաջ իզմիր կատարուած հոգեհանգստեան պաշտօնի նկարագրութիւնը կընէր՝ այս շարաթ ևս բոլորովին կը դատապարտէ սուգը, զայն տգէտ և խաւար միտքերու յատուկ նկատելով, բայց կերեի թէ այդ պարոնը այնպիսի մթին խորշերու, այնպիսի մութին խաւերու մէջ կապրի, որ չգիտէր թէ այսօր հասկան քաղաքակիրթ աշխարհ սուգը սիրեցեալի մը մահուան առթիւ ընդհանուր կերպով իւր քաղաքական օրէնք մը ընդունուած է։ Սակայն արդէն բոլորովին անծանոթ չեն մեզ այն խօսքը, որու կը վերաբերին այդպիսի թղթակիցներ, և այն նպատակը զոր միևնոյն թղթակիցներ առաջադրած են և կընկրտին պաշտպանել իրենց բոլոր գրութիւններուն մէջ։

Նպատակ մը պաշտպանել չկրնար դատապարտելի լինել՝ բաւական է որ ուղիղ սկզբունք մ'ունենայ իրեն հիմ. և ոչ թէ նիթ . . . . . զժբաղդաբար կան անձեր որ աւելի նիթին, իրեն կը յարին քան թէ անոր ներքին արժէքին և անոր բարոյական յարգին և օգտակարութեան, թէև իրաւ է որ այդ անձեր այդ մասին մանաւանդ պաշտօն և հրահանգ ստացած են։ բայց դիտելի է որ մինչդեռ ուղք այդ պաշտօնները դատապարտելու, այդ նպատակները ի վեր հանելու և ամեն վատ ու յոսի միջոցներ պարսաւելու իրր խմբագիր պարտաւորութիւն կրզգաք և ժողովրդային նուիրական իրաւունքներ ապատ և անկողմնակալ կերպով պաշտպանելով գաւառի ձախակողմեան կամ ազատական մասը կը կազմէք, ձեր հակառակորդները ձեռնտուութիւն և աջակցութիւն կըգտանեն ատ ճիշդ այն դասէն որ իրր ազատական իրր ժողովրդային փայլել կը նկրտի։ Անհնար է ըմբռնել թէ ինչո՞ւ կեղրոնին մէջ ազատական լինել և գաւառի մէջ պահպանողական, ինչո՞ւ հոս ժողովրդային երևիլ և այդ տեղ միապետական, ինչո՞ւ տան մեծատուներու զէմ մաքառիլ և այլուր ամենց եսասէր միտումներէն շատ աւելի հակազգային զգացումներ տածող անձնաւորութիւններ պաշտպանել։ Ո՞ւր է այս հակասական ընթացքի մը հանելուկը։ ի՞նչ է այս իրարու բոլորովին ներհակ սկզբանց գաղտնիքը։ ագիտա՞ութիւնն է։ պարզմտո՞ւթիւնն է։ թէ մասնաւոր նկատում։ Բայց միթէ մարդ կրնա՞ տակաւին ազէտ մնալ այնպիսի խնդրոյ մը մասին որու բաւական մասերը պարզեցիք։ կրնա՞ միթէ պարզամիտ գըտնուիլ այսքան գաղանիքներ երևան ելնելէ վերջ։ ի՞նչ որ ըլլայ պատճառը սա իրաւ է որ թէ՛ Աբէլէի և թէ՛ Հայրենիքի մէջ, որով ոչ միայն նուիրական պարտաւորութեան մը մասին պարտապանց գտնուեցան, ոչ միայն կլցան գործել ինչ որ գիտէին թէ պարտ էր գործել, այլ միանգամայն ստեցին, այո՛ ստեցին և ո՞ւր։ — բուն իսկ գաղափի մը առջև, և սուրբ ու վեհ անձի մը դագաղին առջև, ուր մարդ կրկին և կրկին պարտաւորութիւն մը կը զգայ կարծես աշխարհային ամեն վատ և գեռշ կիրքեր վանել իւր սրտէն։ Զարմանալին այն է որ Հայրենիքի թղթակից մը որ դեռ քիչ առաջ իզմիր կատարուած հոգեհանգստեան պաշտօնի նկարագրութիւնը կընէր՝ այս շարաթ ևս բոլորովին կը դատապարտէ սուգը, զայն տգէտ և խաւար միտքերու յատուկ նկատելով, բայց կերեի թէ այդ պարոնը այնպիսի մթին խորշերու, այնպիսի մութին խաւերու մէջ կապրի, որ չգիտէր թէ այսօր հասկան քաղաքակիրթ աշխարհ սուգը սիրեցեալի մը մահուան առթիւ ընդհանուր կերպով իւր քաղաքական օրէնք մը ընդունուած է։ Սակայն արդէն բոլորովին անծանոթ չեն մեզ այն խօսքը, որու կը վերաբերին այդպիսի թղթակիցներ, և այն նպատակը զոր միևնոյն թղթակիցներ առաջադրած են և կընկրտին պաշտպանել իրենց բոլոր գրութիւններուն մէջ։

Նպատակ մը պաշտպանել չկրնար դատապարտելի լինել՝ բաւական է որ

Բարիզ 11 դեկ. — Հանրային կարծիքը գոհ լինելով Ֆրանսո — Զինական վէճին մէջ անգլիական միջնորդութեան անցաղոդ ելնելէն, ազգու գործողութիւն մը կը պահանջէ ի Թանքին և ի Զինաստան։

—

Բարիզ 13 դեկ. — Այն կըռուոյ մէջ, յորմէ յետոյ Ֆրանսացիք գրաւեցին Վոհմարի բերդն՝ Հովաներն 200 մեռեալ ունեցած և 5 թնդանօթ կորուսած են։

Երեսփոխանական ժողովոյ մէջ, ծովային գործոց նախարարն՝ հարցման մը պատասխանելով ըսաւ թէ, արքունի նաւարանն այսուհետև պիտի չինէ մանաւանդ էրոաշէր նաւեր և ծովամարտիկը չոգենաւեր։

—

Գահիրէ 14 դեկ. Անգլիական ձիաւոր և ուղտաւոր զօրամասը բան կը յառաջանայ դէպի Քորթի, ուր կը համախմբին զօրքերը։

—

Գահիրէ 14 դեկ. — Անգլիական կիսարաժինը, ձիերու և ուղտերու վրայ հեծած, կը յառաջանայ ի Քորթի ուր զօրքերը պիտի համախմբին։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Օգոստափառ Սուլթանին անձնական սեպհականութիւնն եղած՝ Թուրպալլի մծտերը գտնուող՝ 16 կարը ագարակներու բոլոր տարածութիւնը ըստ նոր քննութեանց 300,000 արտավարի կը հասնի և 16 զիւղակ կը պարունակեն։

Այս հողերու կից գտնուած ագարակներու տէրերը թէև ժամանակաւ 7—8000 արտավարէն աւելի տեղ գրաւեր են, բայց գաւառխ ՏԷՖԹԷՐԱՐ պէյ եղելութիւնը իմանալով պէտք եղած քննութիւնները կատարելէ վերջ ետ վերադարձնել կաւատյ զանոնք։

Ասկէ զատ միևնոյն հողերու սահմաններու մասին ինչ ինչ անհրաժեշտ նկատուած քննութիւններ ևս կատարելու համար՝ ՏԷՖԹԷՐԱՐ պէյ և Մուֆթէսարրիֆ Բաղիզ պէյ երէկ Դոր—Բունար կ'ուղևորին, կառավարութեան ուրիշ մի քանի պաշտօնեաներու հետ։

Առ այժմ այս ագարակներու անօրինութիւնը գաւառխ ՏԷՖԹԷՐԱՐ Դաարի պէյի հսկողութեան ներքև բլլալով՝ տարեկան հասոյթը 4,000 լիրայէն աւելի կը հաշուի, մինչդեռ առաջ միայն 2,000 լիրայի փոխարէն վարձու կը տուէին։

—

Պասրայի երևելիներէն և Շուրայի աէօվլէթի անդամ վեսիմ. Գասիմ փաշա երկուշաբթի օր քաղաքս հասաւ՝ Գոլիս ուղեւորելու համար։

—

Գաւառխ կառավարիչը վեսիմ. Հաճի Նաշիտ փաշայի Սըզաճըքը նաւանգիստը գացած միջոցին տուած հրամանին համեմատ՝ քարուկիր նաւամատոյցի մը շինութեան աւարտիլը կիմացնեն Սիվրիսարէն։

—

Տիրիլիի մէջ մզկիթի մը ևանդրկուած 60 ընտանիք մուհաճիրներէն 20ի համար բնակարան չինուեր և մնացած մասին բնակարաններու շինութեան ևս ձեռնարկուեր է։

Լսկի—Մահ.քէմէ կոչուած տեղը քանի մը օր առաջ երկու չարաղործներ գիշերայն այն ինչ խանութի մը բանալ կըփորձեն՝ ոստիկանութեան պաշտօնեաներէ կը ձերբակալուին։

—

Կիրակի գիշեր Թարալանէի շուրջը հայ պատանի մը՝ իրմէ աւելի երիտասարդ պատանեակ մը դանակի հարուած մ'ընդունելով կըվիրաւորի թեթեւապէս։

—

Շաբաթ իրիկուն Պուճայի կառախումբն արագօրէն վազած միջոցին՝ երիտասարդ մը դժբախտաբար անցնիլ ուզելով կը չարչարի անիւներուն ներքև՝ երկու կտորի բաժնուելով։

Կըսուի թէ նոյն միջոցին պարտիզպան մը կը հարածէր զինք, որու հետ վէճ մ'ունեցեր է։

—

Ցանդուգն դողութիւն մը տեղի կ'ունենայ շաբաթ իրիկուն Լազարիսներու անցքին մէջ։ Գողերը մթերանոցի մը պատը ծակելով երեսուն օխայի չափ սակամանի, մէկ կողով ափիոն և քանի մ'օսմ. ոսկի կը գողնան։

Հետաքրքրաշարժ միայն իրողութիւնը կ'մացուի։

ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ԶԷՅԹՈՒՆ
ԼԵՒՆԱՅԻՆ ՍԻԱՆ Ի ԳԻԼԻԿԻԱ
ՆԿԱՐԱԳԻՐ
ՏԵՂԱԿԱՆ, ԿԵՆՍԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ
Գրէց
Ե. Ե. Ալլահվէրտեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մասն Ա.— Դիրք, Շէնք, Թիւ բնակչաց, Եկեղեցիք, Վարժարանք, Վանորայք։
Մասն Բ.— Ծնունդք և Մկրտութիւն, Անուանք, Հազուստք, Տնական կարասիք և կեանք, ուտեստք, Լուացարարութիւն լամեցինաց և Մաքրութիւն մարմնոյ, Բարոյք, Կրօնական և բարոյական հանգամանք, Ազգային կեանք, Ընկերութիւնք, Երկրագործութիւն, Արմատք, Բոյսք, Կենդանիք, Գազրական ախտ, Դեղք, Հիւանդութիւն և Մահ, Հանդէս Լաստման։
Մասն Գ.—Աւելորդ ապաշաւութիւնք, Օրհնութիւնք կամ Բարեմաղթութիւնք, Անէծք, Երդմունք, Վրէժխնդրութիւնք, Սոակք, Ցանգաւոր զրոյցք, Պատմութիւնք, Աստեղանունք, Հանելուկք, Տէրունական աղօթք Զէյթունցւոց։
Բառք—գործածականք, գիտականք երկրագործականք և բուսաբանականք։

—

Արամեան մաքուր ապագրութեամբ ի լոյս եկած լինելով կըվաճառի ամեն գրավաճառաց քով՝ ի գին 10 դահեկանի։
Կեդրոնատեղին է Կ. Պոլիս մեծ չուկայ Զուխաճի խանի զէմ Վարագը խան։
Վաճառեալ 30 հատի գինն հեղինակին կըմանէ նուիրեալ է Զէյթունի հրկիզելոց։

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
Ի Հայաբնակ գաւառս
Արևելեան Տաճկաստանի
ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ
Սարէն և Զորէն, Հնէն և Նորէն
Պիտանի գիտնոց
ՄԱՍՆ Ա.Ո.Ա.ՋԻՆ
Տեղագրեց Մանուէլ Կ. Մերախսրեան
Այս նոր մատեանը վերոյիշեալ գաւառաց նախնի և արդի գրութիւնը կըսեղեկացրէ և ժողովրդոց նիւթական և բարոյական կացութիւնը կընկարագրէ յատակ ոճով և հասուն դատողութեամբ, այնպէս որ ինքին ընդհանուր աշխարհագրութեան և պատմութեան մաս մը կըկազմէ և ուստի արժան է որ ամեն հայ սոյն օգտակար մատեանէն օրինակ մը ունենայ իր գրադարանին մէջ։ Կը ծախուի Պոլսոյ բոլոր գրավաճառաց քով ի գին 8 դահեկան արծաթ։

Maison Coldenberg Frères.
—
ԳՈԼՏԷՆԲԵՐԳ - ԵՂԲԱՐՔ վաճառատունը կը ծանուցանէ արդոյ հասարակութեան թէ՝ արանց և

տղայոց համար ձմեռուան հագուստներու մեծ հաւաքածոյ մը ստացած ըլլալով Եւրոպայէն լոկ ձմեռուան եղանակին համար նոր վաճառատուն մ'ալ բացած է Գիշէճիլեր փողոց, թիւ 50 Պատուր Ֆրէնքիանէրին քով։ Այս նոր Հաստատութեան մէջ իւրաքանչիւր կրտոր հագուստի գիներն որոշուած և իր վրայ փակուած են, գիներ՝ որք քաշաքիս միւս բոլոր վաճառատանց մէջ գտնուած նոյն որակին ունեցող հագուստներու գիներէն ստորին են։

Maladies Secrètes
ԾԱՆՈՒՑ.
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Արմատէն կըբժշկուին իմ մէթոտովս՝ որ հիմնուած է դիտական նոր խուզարկութիւններու վրայ, նոյն իսկ եթէ այդ հիւանդութիւնք յուսահատական վիճակի մ'ալ հասած ըլլան։ Կըբժշկեմ նաև պատանեկանութեան ժամանակ սերմնահոսութենէ և ջղային տկարութեանց յաւալի հետևանքներն և անկարողութիւնները։
ԳԱՂՏՆԻՔ ԳՈՒՐՍ ՅԱՐՏՈՒԻՐ
Խնդրեմ հիւանդութեան ճիշտ նկարագրութիւնը զրկել ինձ։
ՏՈՔՏՈՐ ԳԷԼԼԱ
Անգամ բաղմաթիւ գիտնականներ ընկերութեանց
Dr. BELLA
Membre de plusieurs sociétés scientifiques.
6. Place de la Nation 6.
ՊԱՐԻԶ—PARIS

Dr. Nicolaïdes
ԱՏԱՄՆԱՐՈՑԻ ՏՕԲ. ՆԻԿՈԼԱԻԴԻՍ
Պատիւ ունի ծանուցանել Իզմիրի հասարակութեան թէ բնակութիւն հաստատած է քաղքիս մէջ և
Ա. կը հանէ փոած ակռայ և ծնօտին մէջ մնացած ակռայի արմատներ, անմիջապէս ու առանց ցաւ զգացունելու և շատ անգամ առանց կ'արծիքի։ Բ. կըլեցուցնէ ակռայ այնպիսի բաղադրութիւնով մը որ ակրային դոյնը կուտայ կըմաքրէ սև ակռաները նոր մէթոտով։ Դ. կըբուժէ փոած ակռաներ որ բնաւ ցաւ չտգէր կըփոխէ նոր ակռաները Ամերիկայի մէթոտով։ կը շտկէ ծուռ ակռաները։ Դ. կըփոխէ մէկ կամ բոլոր ակռաները միատեղ, այնպէս որ երբէք յայտնի չըլլար թէ իր բնական ակռաները չեն։
Տոքթոր Նիկոլայիտիս կոռնաեան Ֆաոսլա թաղը, պահականոցին դէմ, Արոլոն պանդոկին քով, և կընդունի իր յաճախորդները առաւաւ ժամը 8էն մինչև 12, իսկ կէսօրէն ետև ժամ 2էն մինչև 6։

IMPORTANT
EPILEPSIE
Spasmes, Eclampsie et Névroses
Լուսնոտութիւն (սարա)
Ջղաձգութիւն (սրաղմս)
և ամէն կերպ
Ջղային հիւանդութիւնք
ՀԻՄՆԱՊԷՍ ԿԸԲՈՒԺՈՒԻՆ
իմ մէթոտովս։
Դրամական հատուցմունք բժշկուելէ վերջ կըտրուին։
Դարման կըգտնուի թղթակցութեան միջոցաւ։
ԲՐՈՖ. ՏՈՔԹՈՐ ԱԼԲԷՐԹ
Prof. Dr. ALBERT
Honoré par la société scientifique française de la Médaille d'or de 1re classe pour mérites distingués.
6. Place du Trône 6.
ՊԱՐԻԶ — PARIS.

# KHEDIVIE

ՀԱՐԶՈՒԹԻՒՆ

## ԽԵԴԻՎԻԷ

ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱՐԱԳԸՆԹԱՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ չաբաթ օր դեկտեմբեր 8/20ին, կէսօրէն ետև ժամը 4ին պիտի մեկնի Եգիպտական Թղթատար ՇԱՐՐԻԷ լոգենաւը, որոյ նաւապետն է Բօշէր, 'ի ՊՕԼԻՍ, հանդիպելով Միտիլի և Տարտանէլ։

Անմիջական փոխադրութիւն ապրանաց Կալացի, Իպրահիմի, Ֆիւսթէնտէի և Սև ծովուն բոլոր Օսմանեան և Ռուս նաւահանգստից համար մեկնող նաւերու մէջ։

Բեռնաւորելի ապրանաց, ճանապարհից, աւանդից և այլն համար պէտք է դիմել Գործակալութեան գրասենեակը, Քարափանց վրայ, Միլի պանդոկին անկիւնը։

Գործակալ
ՖՐԱՆՍՈՒԱ ԻՍՓԷՆՏԷՐ

---

# MOORE'S

# ԻՐԱԼԻ

ՍԱՄՍՈՆ ՆՇԱՆՆԵՐ, գրասենեակ Վ. ՍԱՄՍՈՆ ԵՒ ՈՐԴԻ ՓՈՂՈՑ ԵՒ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ (ՆԱՍԷՐ) ՀԱՄԱՐ ԱՆՎԱՐԷՍ ԳՈՒՄԱՐ ԱՌՏՈՒ

---

Grande Distillerie Centrale de Paris—, Bordeaux, Charanton, Havre & Bruxelles.

—

Eugène de Francony Livourne Bordeaux.

Այն հռչակաւոր գործատանց գինիները, գոնեաքները և ամեն տեսակ անուշ ոգելից ըմպելիներու ամենաընտիր եւ աժան տեսակները կը ծախուին՝

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
մթերանոցը Եուսուֆեան խան Ն° 20

—

## ԹԷՅ

Զինաստանէ և Ճավայէ ուղղակի ներքերուած թէյերու ամենաընտիր տեսակներ կ'ծախուին խիստ չափաւոր դիներով։

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մթերանոցը, Եուսուֆեան Ֆերխանէն թիւ 20։

---




Mc. Caw, Stevenson and Orr d'Islande.

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՀԱՄՈՒՐ ԴՈՒՆԱՒՈՐ ԱՊԱԿԻՆԵՐ

Ապակիի վրայ գոյներու ամենակատարեալ նմանութիւն։ — Խիստ դիւրինկերպով կը փակցուին։ — Գոյները անաւէր են և երաշխաւորեալ։—Գիները բացառիկ կերպով աժան են։ Ամբողջ Տաճկաստանի և Եգիպտոսի համար միակ գործակալ.

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, Զմիւռնիա, Եուսուֆի Ֆէրխանէն թիւ 20։

Կը ծախուի նմանապէս Գ. Ֆ. Քոսարիի վաճառատունը Ֆրանկաց փողոց, ինչպէս նաև Գ. Ա. Նուռայի և ընկերութեան վաճառատունը, Շիշէճիլէր ճատտէսի։

---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ

## Ճօն Ա. Ա. Կոռ

Ապահովել ուղղները պէտք է դիմեն առ Գ. Ց. Կ. ՀԻՒՄՆԵԱՆ, Սէֆէրեան խանին քով՝ Եսայեանց մաղազան։

---

ELIXIR DENTIFRICE

ԷԼԻՔՍԻՐ ՏԱՆԹԻՖՐԻՍ ակռայ մաքրող հեղուկին գործածութեամբ, բոլորովին կանցնի

ԱԿՌԱՆԵՐՈՒ ՑԱՒԸ

*

ՓԼԷՏԻԿՏԵԱՆ ԿՐՕՆԱՒՈՐՆԵՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՄ ՄԱԿԻԻԼՕՄ

Իրը ամենէ մեծ վարձատրութիւն Պրուսէլի մէջ 1880ին երկու հատ ոսկի շքագրամ ստացած է։ Իսկ աբբայ Փիէր Պուրսօյի կողմանէ 1873ին հնարուած է

EAU de ZENOBIE

ԶԷՆՈՊԻԱՅԻ ՋՈՒՐԸ

որ մաղերուն իրենց նախկին գոյնը տալու համար եղական ջուր մ'է և քիչ օրուան մէջ արդիւնքը կը տեսնուի։ Գործածութիւնը խիստ դիւրին է։ Այս հեղուկը ներկ չէ, այլ ընտիր դեղախառնուրդն ջուր մը, որ մաղերը զօրացունելով թափիլը կարգիլէ և իրենց նախկին գոյնը կուտայ։

*

ԼԱՀՕՌԻ ՓՈՒՏՐԱՆ

փակչող, կակուղ և փայլուն է։ Լահօռի ֆոտոյին մէջ կը բովանդակին թէ բրինձի փոշիին և թէ մինչև հիմա գործածուած փոշի իներուն (փուտրա) ընտիր յատկութիւնները։ Այս փոշին եթէ միշտ գործածուի, մորթին գեղեցկութիւն և փայլունութիւն մը կուտայ՝ և կը պահպանէ զայն։ Այս փոշին քսուելէ վերջ պէտք է որ բարակ լաթով կամ կակուղ վրձինով մը սրբուի։

*

ՏՈՒԹՈՐ ՌԻՇԱՐԻՆ ՆԻՐԿԸ

խիստ կատարեալ և ընտիր ներկ մ'է։ Գործածելէ առաջ մաղերը լուալու առանց պէտք կենալու՝ մաղ և մօրուք կընկերկէ և մորթին վրայ ամենևին բիծ չը ձգէր։

Ընդհանուր գործակալն է ի Պօրտօ Հիւկիւրի փողոց 3 թիւ, 1807ին հիմնեալ ընկերութիւնն՝

ԱՍԼԻԿԼԻՆ

*

Բոլոր ասոնք կը ծախուին Իզմիրի ընտիր հոտեղէններ ծախողներուն, դեղարաններուն, դեղագործներուն և այլն քով։

Ասիական տաճկաստանի համար ընդհանուր գործակալն է

ԺԱՆ Ժ. ՖԻԼԻՓՈՒԶԻ
Իզմիր, Ֆրանկաց թաղ
Ռիւկի Ֆերխանէն։

---

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԵՆԱՑ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԹՈՇԱԿԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Compagnie d'Assurance Viennoise—Vie et Rentes Viagères.

Վիէննայի Կենաց և Հանգստեան Թոշակի Ապահովութեան Ընկերութիւնը խիստ չահաւոր և դիւրամատչելի պայմաններով ապահովութիւններ կ'ընդունի ամէն կարգի և հասակի անձանց.

Ա. Ուղղակի մահուան դէմ ապահովութիւն։

Բ. Որոշեալ ժամանակէ մը վերջը վճարելի ապահովութիւն։

Գ. Փոքրիկ տղայոց և աղջկանց դրամագլուխ և օժտի ապահով.

Ընկերութիւնը իր մօտ ապահովեալ անձինքը կ'ընդունի իր շահուն իբր ընկեր, և միշտ 3 տարին անգամ մը ապահովեալին վճարելի մէկ տարուան տուրքին վրայ միշտ %0 40 բաժանելի շահ մը երաշխաւորելով։

Ընկերութեանս դիխաւոր և լիազօր Գործակատարները. Ի Պոլիս, Տեարք Լէպէ է Ֆիլ Վիկթոռի դրամատունն է։

Զմիւռնիոյ Գործակատար Մ. Օսկար Միրզան Լօքալ Էքզէլ Էվանժէլիք Ն° 27։

Եւ որովհետև այս Ընկերութեան մասնաւոր և շահաւոր պայմանները շատ ճիւղերու կը բաժնուի, առ այժմ պէտք է դիմել առ Մ. Նազարէթ Եաղճեան, Վերատեսուչ Թուրքիոյ, որ յատկապէս պաշտօնով եկած է հոս քիչ մը ժամանակի համար, որպէս զի լիովին պէտք ըլլալիք տեղեկութիւնք գոհացուցիչ կերպիւ լինին։

---

## Գ. Ն. ԼԷՎԷՆՏՈԲՈՒԼՈՅ

ԶՄԻՒՌՆԻԱ

Ֆրանկաց թաղ, Ն. Պիւոճիի Ֆէրխանէն
(Քափուչիներու եկեղեցին դէմ)

Այս վաճառատան մէջ կը ծախուին, թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ կոճակներ, երիզներ, ժապաւէններ, զարդեր, տեղնագործութիւններ, բուրդ, ասեղ, թաշկինակներ, շապիկներ, վզնոցներ, փողկապներ, գուլպաներ, տղու գլխարկներ, ծաղիկներ, փետուրներ, հովանոցներ. հոտեղէններ, մանկանց խաղալիկներ, մանուածք կտաւներ (մուշէմմա), պատառաքաղ և դանակ, հարմոնիկան (արմոնիք), կիթառ, քնար, սրինգ, օրգանոյ, և այլն և այլն։

Արժանի մէջիտը 33 դուրուշի հաշով կ'առնուի։

---

CHEMIN DE FER D'AIDIN

ԺԱՄԱՆԿԱՑՈՅՑ, ՍԿՍԵԱԼ 14/26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

ՊՈՒՃԱ ԵՒ ՍԷՎՏԻՊԷՅՑ

| ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ | ԿԻՐԱԿԻՆԵՐ |
|---|---|
| Իզմիրէն Պուճ. ժամ 6,40.—9.—կ. Ա. | 6,40—9.—10.45 կ. Ա. |
| Պուճ. Իզմիր 7,20.—8,25.—9,40 կ. Ա. | 7,20—8,25—9,40—12 |
| Իզմիրէն Սէվտ ժամ 6,40—9—կ. Ա | 6,40.—9—10.45 կ. Ա. |
| Սէվտիքէօյէն Իզմիր 8—0—9,50.կ. Ա. | 8, 0—9,50—11,45 կ. Ա. |
| Իզմիրէն Պուճ. 12,15—4,45—6 30կ.Ա. | 2,30—4. 5—6, 0 կ. Ե. |
| Պուճայէն Իզմիր 2,0—6. 0—7. 0—կ. | 3,40—5,30—6,30—կ. Ե. |
| Իզմիրէն Սէվտի. ժամ 4,45*—կ. Ա. | 2,30—4, 5—կ Ե. |
| Սէվտիքէօյէն Իզմիր 5,45*—կ. Ա. | 3,25—5, 0—կ. Ե. |

Ամեն Շաբաթ. երթալ 2.30,—Դարձ. Սէվտ. 3.30 Պուճ. 3,45 կ. Ե.

*Շաբաթ օրեր 15 վայրկեան ուշ
** » » 30 » »

| | | | |
|---|---|---|---|
| ՀԱՆԱՊԱԶՕՐ—Սէրայքէօյի համար | | 8—0 | կ. Ա. |
| » | Ա.յտընի | » 10—10 | » » |
| » | Ս.յասուլուքի | » 6—40 | » » |
| » | Թիրէի | » 12—0 | կէսօրին |

Կիրակիները Ա.յտըն երթալ 4,30—կ. Ա.—Դարձ. 1,30 կ. Ե.

---

SMYRNA AND CASSABA RAILWAY

ԳԼԽԱՒՈՐ ԴԻՄ

Սկսեալ 22 Սեպտեմբեր 1884

ԿԱՌՈՒՑԻՆ ԿԸ ՄԵԿՆԻ

ԻԶՄԻՐԷՆ ԱԼԱՇԷՀԻՐ

| | | |
|---|---|---|
| Կը մեկնի Իզմիրէն | կ. Ա. 9 30. | կ. Ե. 1 50. |
| Կը հասնի Մէնէմէն | » 10 39. | » 2 59. |
| » Ս աղնիսա | » 11 55. | » 4 14. |
| Կը մեկնի Մաղնիսայէն Ղասապա | » 12 7. | |
| » Սալէհլի | կ. Ե. » 2 23. | |
| » Ալաշէհիր | » 3 41. | |

---

SMYRNA AND CASSABA RAILWAY

# BOURNABAT

ԻԶՄԻՐԷՆ ՊՈՒՐՆԱՊԱՏ

Սկսեալ 22 Սեպտ. 1884

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

| Կէս օրէն առաջ ժամ | Կէս օրէն ետեւ ժամ |
|---|---|
| 7. 8. 9. 12. | 3 15. 4 30. 5 45. 6 45. |

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

| Կէս օրէն առաջ ժամ | Կէս օրէն ետեւ ժամ |
|---|---|
| 8. 9. 15 10. 30 12. | 2. 20 3. 10 4. 5. 15 6. 30 |

ՊՈՒՐՆԱՊԱՏԷՆ ԻԶՄԻՐ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

| Կէս օրէն առաջ ժամ | Կէս օրէն ետեւ ժամ |
|---|---|
| 7. 30 8. 30 9. 35 | 1. 30 3. 45 5. 15 6. 15 7. 15 |

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

| Կէս օրէն առաջ ժամ | Կէս օրէն ետեւ ժամ |
|---|---|
| 8. 30 9. 45 11. | 12. 20 2. 40 3. 30 4. 45 6. 7. |

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՏՊԱՐԱՆ, Ի ՍԷՎԼԻ ԽԱՆ ՎԵՐՆԱՑԱՐԿ ԹԻԻ 17